ԿՈՐԱԾ ՔԱՐՏ

Փոքրիկ Արմենի մաթեմատիկական տրամաբանությունը զարգացնելու համար նրա հայրը պատրաստել է քարտեր, որոնց վրա գրված են 1-ից n բնական թվերից որևէ մեկը: Հերթական անգամ քարտերի հետ խաղալու ժամանակ Արմենը նկատեց, որ կորցրել է քարտերից մեկը:

Օգնեք Արմենի հայրիկին գտնել կորած քարտի համարը:

Մուտքային տվյալներ.

Մուտքի առաջին տողում տրված է n բնական թիվը, որը չի գերազանցում 1000-ը: Մուտքի հաջորդ (n-1) տողերում տրված են մնացած քարտերի համարները:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակ.

N	stdin	stdout
1	5 1 2 3 4	5